ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ, ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ

Ե., 1998, Երևանի համալսարանի հրատ., 294 էջ։

Կոստան Զարյանը XX դ. հայոց գրականության ամենաառեղծվածային դեմքերից է, թե իր կյանքով, թե ստեղծագործությամբ և տասնամյակներ շարունակ իր վրա է բևեռել գրական հասարակության (Սփյուռքում և այստեղ) ուշադրությունը՝ իրեն բազմաթիվ անհայտներով մի հավասարում։ Այդ անհայտներից մի բանիսն այսօր էլ՝ Արծրուն Ավագյանի հաջողված, ամբողջական գրքի ներկայությամբ, մնում են այն հիմունքներով, որ ամեն մեծ գրող ու արվեստագետ յուրաքանչյուր նոր սերնդի հետ խոսում է նաև անհայտների լեզվով և սպասում նորանոր պատասխանների։ Դա նրա բնույթն է, տաղանդի նշաններից, միայն սովորականների հավասարումն է միանշանակորեն լուծվում, ինչպես զգրոցական խնդիրը։

Մենագրության կենսապատումը, որքան էլ գիտական ու փաստագրական, չի կարելի առանց հուզմունքի կարդալ, որովհետև այս էջերում, Զարյանի ճակատագրի օրինակով, տեսնում ենք նաև մեզ և մեծերին գիտակցաբար, թե անդիտորեն երբեմն անտեսող մեր ժամանակի ավանդական կնիքով չար ու ողորմելի նշաններ։ Կոստան Զարյանին բախտ չվիճակվեց իր երկերի ժողովածուն մի բանի հատորով տպագրված տեսնել, նրա երկերի մեծ մասը մնաց տասնամյակների աշխարհասփյուռ հայ մամուլում, ըստ էության՝ անընթերցող, ասել է նաև՝ անտեր, իր արժեքն ու նշանակությունը պահպանելով միայն Արծրուն Ավագյանի նման նվիրյալների համար։

Գրքի առավելությունը, որ բխում է թե կենսապատումից և թե, մանավանդ, գրողի ստեղծագործության վերլուծումներից ու գնահատումներից, հեղինակի այն դիտակցությունն է, ըստ որի՝ Կոստան Զարյան երևույթի անտեսումը, նրա դերի ու նշանակության արհեստական իջեցումը տասնամյակների գրական բաղարտկանությամբ, նրա ավելի կամ պակաս չափով օտարումը XX դ. հայոց գրականության մայր ճանապարհից, մեծապես խոչընդոտել-խանգարել է գրական զարգացմանն ամեն առումով, հատկապես՝ դեղադիտական հայացքի արդիականության։ Կոստան Զարյանը նա էր և է, որի դպրոցում ուսանելը (ինչպես հայոց մյուս մեծերի) ոչ թե ցանկալի է, այլ պարտադիր։

Արծրուն Ավագյանը գիտական պարտաճանաչությամբ հիշել է այն բոլոր կարևոր անուններն ու գործերը, որոնք անդրադարձել են Կոստան Զարյանին, այդ շարքում կան մեծ ու վաստակավոր դեմքեր, որոնք հետաքրքիր ու բնորոշ դիտարկումներ են արել գրողի վերաբերյալ, սակայն այդ ամբողջը շատ դեպքերում մնում է իմպրեսիոնիստական, էսեիստական գրականագիտության ու բննադատության դաշտում և չի հասնում փաստերի բազմակողմանի համադրմամբ գիտական ընդհանրացման։ Սրանով ընավ չեմ ցանկանում ստվերել այդ մոտեցման նշանակությունը, ընդհակառակը, որոշ բարձր գրսևորումներով, էսեպրությունը հասնում է ավելիին, քան զտարյուն գիտական վերլուծությունը, ինքը՝ Կոստան Զարյանը, այս ժանրի անզուգական վարպետ է՝ թրծված եվրոպական իմպրեսիոնիզմում, մտքի, ոգեղինության ու զգացմունքների փոխներթափանցման փայլուն արտահայտիչ։ Ա. Ավագյանի ուսումնասիրությունն առաջին լուրջ, ծանրակշիռ քայլն է՝ Կոստան Զարյանին գիտելու գիտական հայացքի խոշորացույցով։

Զարյանի կյանքն արժանի է գիտական նկարագրության, նա հարազատ ժողովրդի ճակատագրում թաթախված հայ գրողների պայծառ համաստեղության այն դասական վերջին մոհիկանն է, որի կյանքը հարստացնում է գործն

ապրված զգացմունքների տառապանքով. իսկ գործը իմաստավորում. անհատականացնում է կյանքի հանգրվանները՝ գլանք դարձնելով դարաշրջանը բնութագրող նշաններ։ Ա. Ավագյանի՝ փաստերի գիտական ընտրությամբ բարեխղճորեն արված անդրադարձը նրա կյանքին. թեև ոչ ամենայն մանրամասնությամբ. մեզ ներկայացնում է գրողի և նրա ապրած ժամանակի այնքան անհրաժեշտ պատկերը՝ մի ընդարձակ մուտք դեպի նրա հարուստ ստեղծագործական աշխարհը։

Ի պատիվ Արծրուն Ավագյանի պիտի ասել, որ նա կարողացել է գրողի գլխավոր երկերի շարքում ի մի բերել նաև բավականին «երկրորդ պլանի» ստեղծագործություններ, որով և ամբողջացել է Զարյանի գրողական դիմանկարն էական գունագծերով։

Աշխատության երկրորդ գլխում՝ «Գեղագետ տեսաբանն ու քննադատը», վերլուծվում և գնահատվում է, ըստ իս, ամենաբարդ. հետաքրքիր և մեզանում շատ կողմերով նորություն խոսող ու քարոզող Զարյանը։ Մենք այդպիսի մի գրող էլ ունենք՝ Հակոբ Օշականը։ Բայց ի տարբերություն Օշականի գեղագիտական ու քննադատական հայացքների, թող թույլ տրվի ասել՝ զգալի խառնիճաղանջությանը, Կոստան Զարյանի մտքերն ու կողմնորոշումները համակարգված են մի կուռ ու ամբողջական աշխարհափիլիսոփայությամբ. որտեղ խաչվում են ազգայինն ու համամարդկայինը, պատմությունն ու ներկան, կյանքն ու արվեստը, և այդ ամենն ուղղված՝ դարաշրջանի զարգացմանը։ Ավագյանն այստեղ սահմանափակվել է այսպես ասած ընդհանուր դրույթներով, սակայն մատը դրել գրեթե փիլիսոփայի պես խորհող և իր մտքերը մաթեմատիկոսի մակարդակով ձևակերպող զարյանական այդ ներաշխարհի մի քանի էական կողմերի վրա։ Այստեղ էլ ընտրությունը ճշգրիտ է արված՝ բնորոշը, այսօր էլ կարևորը և ընդհանրականը։ «Իրական իրականության» և «անիրական իրականության» զուգորդման մեջ Ավագյանը տեսնում է զարյանական գեղարվեստական մտածողության բնույթը։ Հեղինակն առանձնացրել է նաև «հայրենիքի ճակատագրի և մարդու ազատության խնդիրները»։ Գրողի հիանալի ճանաչողությունը, առավել ևս ներզգացողությունը նրան թելադրում է գրել. «Աղատատենչության, ճշմարտության ու գեղեցկության նվիրումներն առհասարակ շատ սրտամոտ են գրողին, որը նրան հնարավորություն է տալիս դուրս գալու ազգային նեղ շրջանակներից, ապրել համամարդկային ու «տիեզերական» հոգս ու ցավերով»։ Խիստ բնորոշ է նաև հետևյալ գիտումը. «Զարյանը համոզված էր, որ իսկական արվեստագետը ոչ միայն պատկերում է այն, ինչ որ կա, այլև այն, որ միայն ինքն է տեսնում՝ նյութին տալով իր ես-ի պատկերը»։ Ըստ Զարյանի, «բուն գեղեցիկն այնտեղ է, ուր անծանոթն է ու անտեսանելին»։ Ոչ թե կյանքն արտադրել, այլ գրականության մեջ ստեղծել նոր կյանք՝ հայտնաբերելով «խորքային իմաստներ»։ Ինչպես նշում է գրականագետը, դա իրականանում է մտքի անսովոր թռիչքներով, փիլիսոփայական խորացումներով, պատկերավորման ոչ սովորական ձևերով, վերացարկված մտածողությամբ, երևույթների խորհրդանիշներով։ Ավագյանը ճշգրիտ է նշում Զարյանի գեղագիտական մտքի նշանաձողերը։ Ըստ Զարյանի, բառերը «շինված են իրերի մակերեսը արտահայտելու համար», որոնց ետևում «անտեսանելին և անքննելին է»։ Ի տարբերություն «բանաստեղծությունը բառն է» տարածված կարծիքի, Կոստան Զարյանը համոզված է, որ երգը բառը չէ, այլ՝ հոգին, բառը լոկ մի նշան է «բաց անելու համար հանգույցը մտքի», իսկ բուն երգը անբառ է։ Նույնիսկ «սեր», «հոգի» բառերը, եթե չեն բացում մտքի հանգույցը, ասել է՝ ներքին մարդու ալեկոծ ծովը, որքան էլ գեղեցիկ՝ մնում են բառարանում գրված բառեր։ Զարյանը շիկացած ապրումի կողմնակիցն է, որ կարող է արտահայտվել նաև առանց բառերի, այդ ծովի հայելին հանդիսացող աչքերով, մտքի զգացմունքով, այստեղից էլ՝ նա առաջադրում է քիչ բառերի գեղարվեստական տեքստը՝ ընդդեմ բառերի վաճառականության։

Հատկապես արժեքավոր է գրականագետի համախոհությունը Զարյանի «Հային Հիսուսը», «Հեթանոսությունը» հոդվածների գարափարներին,

որոնցում «հայ գրականության թերություններից մեկը» արդարացիորեն համարվում է այն, որ մենք «գրեթե միշտ շեշտը դրել ենք սոցիալական խնդիրների վրա»՝ հերոսներին կապելով «առարկայական աշխարհին», նրանց կախման մեջ դնելով «նյութականից»։ «Այսինքն,—շեշտում է Ավագյանը,— այն արտացոլել է ուրիշների մենք-ը, փոխանակ պատկերելու իր ես-ը»։ Գրականության մեջ «ինքնության և անձնականության» շեշտադրումն է, որ պիտի հանդեցնի հայ ոգու պաշտամունքին, ադդալին թաքնված հանճարի հայտնաբերմանը»։ Սա հայ գրականության, դյխավորապես արձակի, մի ավանդական թերություն է, որ շարունակվում է առ այսօր, հետևաբար դեռևս 10-ական թվականներին արտահայտված այս դատափարները պահպանում են իրենց արդիականությունը։

Կոստան Զարյանը իր ստեղծագործության մեջ և հատկապես գեղագիտական հայացքներում ձգտում էր հայոց գրականության եվրոպականացմանը՝ դրանով իսկ գիտակցաբար թե ենթագիտակցորեն կանգնելով Տերլանի «Հայ գրականության դայիր օրը» գրական մանիֆեստի կողքին, նրանից մեկ առաջ ընկնելով, մեկ հետ, բայց, ճակատագրի և ապրած երկար կյանքի հանգամանքով՝ ավելի ուշաց, ե գա գդալի առաջադիմական ազդեցություն ունեցավ թե սփյուռքահայ և թե արեելահայ գրական կյանքի վրա։

«Կոստան Զարյան. կյանքը և գործը» ուսումնասիրությունը, գրողի կենսալատումից հետո, նրան զուգահեռ արժեքավորվում է գարյանական գեղագիտական հայացքների գիտական հանդամանալից վերլուծությամբ։ Այստեղ Արծրուն Ավագյանը հանգես է բերել գրականագետի լայն հետաքրքրություններ՝ երևույթները դիտելով թե իբրև գրականության պատմաբան, և թե որպես տեսության հարցերի զիտակ ու քննադատ։ Մշակելով աշխատության այս երկրորդ դյխի տեսարանությունը, նա հիմնավոր նախապայման է ստեղծել Զարյանի գեղաբվեստական ժառանգության՝ բազմաժանր պոեզիայի և արձակի վերլուծության և գնահատությունների համար, որոնք, թեև ոչ միշտ խորքային ընդգրկումով, տիպական գծերով մեզ են ներկայացնում գրողի գեղարվեստական աշխարհի էությունը։ Աշխատության այս գլուխները ոչ այնքան թեմատիկ բնույթ ունեն, որքան պրոբլեմային, և ի մի բերելով ընդհանրացնում են Կոստան Զարյանի գեղարվեստական աշխարհի պատկերը՝ ազգային ու համամարդկային շահախնդրություններով, մշտապես ուղղված գրականության և ժողովրդի ոչ այնքան ընթացիկ կյանքի, որքան զոյապահպանության վաղվա օրվան, որը, նրա կարծիքով, պիտի լինի հզոր՝ մտքի և ոգեղինությամբ։

Արծրուն Ավագյանի աշխատությունն ունի որոշ բացթողումներ։ Նշելով Կոստան Զարյանի գրական-գեղագիտական հայացքներում երբեմն հանդիպող «հակասություններն ու ծայրահեղությունները, գերագույն ճշմարտություն հայտնելու հավակնությունը»՝ Ավագյանը գրեթե միշտ հանդուրժում է այդ հայացքների «հակասություններն ու ծայրահեղությունները», մի տեսակ անձնատուր լինելով դրանց։ Այս հոգեբանությունը հասկանալի է, շատերս այսպես կվարվեինք՝ կանգնելով մեծ գրողի առջև և նայելով նրա խոր ու պայծառաղույն աչքերին, իսկ Զարյանը հենց այդպիսի աչքեր ուներ, չէինք համարձակվի ասելու՝ աչքիդ վերև ունք կա։ Այդուամենայնիվ, մի հարցում նրա հետ հարկ է վիճել և հիմնավորապես վիճաբանել՝ հայոց գրականության «վերքասացության», ինչպես նաև «ողբասացության» հարցում Զարյանն սպանիչ է ասում՝ դարեր շարունակ «վերք ենք քորել»։ Եկեք մտածենք՝ ինչո՞ւ, և արդյո՞ք այս վերքաքորությունը հենց քորություն է և ոչ հայոց պատմության տառապանք, ճակատագիր, որին գրականությունը չէր կարող և չի կարող անտարբեր լինել։ Սա նյութը չէ, որ ենթակա է քորման, այլ հոգին, որ ենթակա է ներզդացման՝ սրտով, արյամբ և մտքով։ Խորենացու «Ողբից» սկսած և դեռ ավելի վաղ, հայոց ողբասացությունը՝ Նարեկացի, Աբովյան, «Երկիր Նաիրի», մինչև մեր օրերը՝ «Անլուելի կանդակաառուն», ողբասացություն չի եղել, առավել ևս՝ վերքաքորություն, այլ մեր գրական-հոգևոր հայտնագործություններից մեկը՝ ողբ անունով գրական ժանր, մեր գրականության ազգային տիպաբանության գիծ, որ, պուցե, ուրիշ ոչ մի գրականություն չունի, երաժշտական, ողբերգական խո-

րալ գրականության մեջ։ Երբեմն բանավեճի ոգևորությամբ տարված, Զարյանը արել է բնութագրումներ, որոնց հետ չպետք է համաձայնել, մանավանդ, չմոռանանք, իր գրական-գեղարվեստական ժառանգությունը նույնպես թաթախված է վերքի ցավերից ծնված ողբասացության մեջ։

Կոստան Զարյանի գրական, տեսաբանական, գեղագիտական դասերը, արժեր գրքում ընդգծումներով ներկայացնել՝ հատկապես սերունդներին ի տես՝ որպես դպրոց ու համալսարան։

Կարծում եմ, անհրաժեշտ էր հանգամանորեն խոսել մեր որոշ գրողների վրա Զարյանի թողած գրական ազդեցության մասին, մասնավորապես՝ Պարույր Սևակի, որն անցել է նաև զարյանական դպրոցի միջով՝ ինքն էլ դառնալով դպրոց։

«Կոստան Զարյան. կյանքը և գործը» գրքի հրապարակ գալը նշանակալից երևույթ է մեծատաղանդ գրագետի (այդպես կասեին սփյուռքահայերը) կյանքի ու գրական ժառանգության ուսումնասիրման ճանապարհին, սրանով նոր ազդակ է տրվում գրողի ստեղծագործության ճանաչողությանը, որը, ցավոք սրտի, այսօր բավարար չէ լայն ընթերցողի կողմից, ինչպես նաև ճշգրտվում է նրա բարձր նշանակությունը XX դ. հայոց գրականության դաշտում։ Կոստան Զարյանը իրեն արժանի համբավը չունի թե ժողովրդի և թե գրականության պատմության մեջ։ Դա անարդարություն է։ Դա աղքատացնում է մեր պատմությունը։ Սրա հիմնական պատճառներից մեկը նրա երկերի ցրվածությունն է աշխարհասփյուռ հայ մամուլում։ Դժվար թե առաջիկա տարիներին հնարավորություն ունենանք մի քանի հատորով մեկտեղելու Զարյանի գրական ժառանգությունը։ Սակայն կարևոր մի քայլ կարող ենք անել՝ Կոստան Զարյանի երկերի լիակատար մատենագիտական գրքույկի հրատարակությունը, որը հնարավորություն կտա հետաքրքրասեր ընթերցողներին և նոր հետազոտողների գնալու նրա հետքերով։ Այդ աշխատանքը ամենից լավ կարող է անել Արծրուն Ավագյանը՝ մեր Ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի և նրա գրականության ամբիոնների աջակցությամբ։

Ն. Մ. ԱԴԱՀՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր